



ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Ֆինանսական մոնիթորինգի բաժնի
մասնագետ
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
14/04/2023թ.
Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է ֆինանսական մոնիթորինգի բաժնի մասնագետ ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գործարար հարաբերությունների/գործարքների պատշաճ ուսումնասիրության իրականացում,
- Վերլուծությունների իրականացում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով, կասկածելի գործարքի հաշվետվության պատրաստում և ներկայացում,
- Հաճախորդների ռիսկի դասի գնահատման/վերագնահատման գործընթացի իրականացում/վերահսկում,
- Վերագնահատման հետ կապված տարեկան հաշվետվության պատրաստում,
- Ներքին իրավական ակտերի վերանայում/մշակում,
- Օրենքով, և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- 1-3 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում,
- Բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ,
- Օտար լեզուների իմացություն (անգլերեն և ռուսերեն)
- Հաղորդակցման հմտություններ,
- Վերլուծական հմտություններ,
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն,
- Թիմային մտածողություն,
- Ենթաապահություն և պատասխանատվության զգացում,
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում,
- Փորձով և գիտելիքով կիսվելու հմտություն Նոր աշխատակցի մենթոր լինելու համար,

- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն,
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն,
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՐԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: